

Հայկական վիպական բանահիւսու-
թիւնը վերին աստիճանի հարուստ է, բաղ-
կացած մի քանի խոշոր էպոսներից եւ բա-
զում փոքր ստեղծագործութիւններից¹:
Սրանց պէտք է գումարել նաեւ հայոց
քրիստոնէական դարձի վիպական պատ-
մութիւնը (Ագաթանգեղոս) եւ վանական
բանահիւսութեան այլ նմուշներ: Սովորա-
բար, Արեղեանի հետեւութեամբ, հայոց է-
պոսներ են համարուում հետեւեալ ստեղ-
ծագործութիւնները՝ 1) «Վիպասանք», 2)
«Պարսից պատերազմ», 3) «Տարօնի պատե-
րազմ», 4) «Սասնայ ծոեր»: Ընդ որում,
«Պարսից պատերազմն» ու «Տարօնի պա-
տերազմը», որոնք Փաւստոս Բուզանդի եւ
Յովհան Մամիկոնեանի պատմական եր-
կերն են, որոշակիորէն տարբերուում են
միւսներից եւ, չնայած ժողովրդական ու
առասպելական ակնյայտ տարրերին
(հմտ., օրինակ, Մուշեղի վերակենդանաց-
ման ակնկալիքը արալէզների միջոցով,
Գիսէ եւ Դեմետր երկուորեակատիպ կեր-
պարների կողմից Վիշապ քաղաքի կառու-
ցումը եւն), որպէս միւսներին համարժէք

էպոսներ կարող են գնահատուել միայն ո-
րոշ վերապահութեամբ²:

Միւս կողմից, սրանց պէտք է աւելա-
ցուի ժողովրդական երկու էպոս՝ հայոց
ազգածին աւանդութիւնը եւ «Քեօօղ-
լին»: Ընդհանրապէս, ազգածին աւանդու-
թիւնները հանդէս են գալիս տարբեր ձե-
ւերով՝ որպէս առասպել, լեգենդ եւ էպոս:
Հայկեանների վիպական պատմութիւնը
տիպիկ հերոսական էպոս է՝ միւս հայկա-
կան էպոսների նման միաւրուած մի քա-
նի սերունդ (ճիւղ) ընդգրկող մէկ վիպա-
կան ամբողջութեան մէջ, Հայկից մինչեւ
Արա Գեղեցիկ, որտեղ հայոց նախահայրե-
րի եւ նրանց հակառակորդների՝ ծագումով
դիցաբանական կերպարները էպոսին
միանգամայն բնորոշ կերպով վիպականա-
ցել եւ պատմականացել են: Այն աւան-
դուած է Խորենացու եւ Սեբէոսի երկերում
(երկուսն էլ վերցուած են Մար Աբասի
կողմից մշակուած տարբերակից եւ համա-
պատասխանեցուած են Աստուածաշնչին
ու յունական աղբիւրներին), բայց եւ այն-
պէս, նշանակալի չափով վաւերական է եւ
միւսների համեմատութեամբ աչքի է ընկ-
նում առաւել բնիկ տարրերով³: Իսկ «Քեօ-

օղլին» թիւրքական էպոս է, որը մտել է
նաեւ այլ ժողովուրդների աւանդոյթ
(յայտնի է թուրքերէնով, ադրբեջաներէ-
նով, թուրքմէններէնով, ուզբեկերէնով, դա-
զախերէնով, թաթարերէնով, տաջիկերէ-
նով, արբասերէնով, արաբերէնով, բուլղա-
րերէնով, վրացերէնով, հայերէնով եւ այլ
լեզուներով): Նման օրինակներ են կովկա-
սեան նարթական էպոսը եւ Հնդկական
«Մահաբհարատան» ու «Ռամայանան»՝
տարածուած բազում ժողովուրդների մէջ:

Առաջին վէպերը յայտնի են Հին
պատմիչների աշխատութիւններից (Ագա-
թանգեղոս, Փաւստոս, Խորենացի, Սեբէոս,
Յովհան Մամիկոնեան): Այդ հնում արդէն
գրառուած վէպերը ժողովրդի կողմից յե-
տագայում չեն պատմուել. դեր է խաղացել
գրաւոր խօսքի հեղինակաւոր լինելու
հանգամանքը: Իսկ «Սասնայ ծոերը» եւ
«Քեօօղլին» աւանդուած են բանաւոր եւ
պատմուել են մինչեւ ի. դար:

Հին վէպեր: Ազգածին աւանդութիւնը
սկսում է բարելոնեան աշտարակաշինու-
թիւնից, այսինքն՝ ժողովուրդների առա-
ջացման ժամանակից, եւ աւարտում հա-
յերի պարտութեամբ ասորեստանեան թա-
գուհի Շամիրամից (Ք.ա. Թ. դարի վերջ),
որը հայկական աւանդոյթում անձնաւոր-
ուում է Ուրարտու պետութիւնը (նրան են
վերագրուում Ուրարտուի նշանակալի կա-
ռոյցների, այդ թւում՝ մայրաքաղաք Վա-
նի; Մենուա արքայի ջրանցքի կառուցու-
մը, ուրարտական սեպագիր արձանագրու-
թիւնները եւ այլն): Ուրարտուի տիրապե-
տութիւնը՝ Ք.ա. Թ.-է. դդ., այսպիսով, ժո-

ղովրդական յիշողութիւնը համարում է ա-
սորեստանեան գերիշխանութեան դարաշը-
ջան: «Վիպասանքը» յետուարտական
դարաշրջանի էպոս է. նրա առաջին նշա-
նակալի հերոսը՝ Տիգրան Երուանդեանը,
թուագրուում է Ք.ա. 2., իսկ վերջինները՝
Արտաշէսը եւ Արտաւազդը՝ Ք.ա. Բ.-Ա.
դարերով, բայց Արտաշէսի կերպարն էպո-
սում խառնուել է աւելի ուշ շրջանի՝ Ար-
շակունի արքաների կերպարների հետ⁴:
«Պարսից պատերազմը» պատմում է Ար-
շակունիների դարաշրջանի (Ա.-Ե. դդ.)
յատկապէս վերջին շրջանի, իսկ «Տարօնի
պատերազմը»՝ յետարշակունեաց դարաշը-
ջանի Տարօն նահանգի տէրերի, Հիմնակա-
նում՝ Մամիկոնեան իշխանների՝ պարսիկ-
ների դէմ ունեցած պատերազմների մա-
սին: «Սասնայ ծոերը» ընդգրկում է արա-
բական տիրապետութեան շրջանը եւ յե-
տագայ ժամանակահատուածը (է.-ժ.Գ.
դդ.): Հայկեանների եւ Սասունի էպոսներն
առաւել առասպելական են (Հայկը, Արա-
մը, Արան, Մովինարը, Սանասարը, Մհերը
Հին աստուածների վիպականացած կեր-
պարներ են): Միւս էպոսների հերոսները
Հիմնականում կամ յաճախ պատմական
դէմքեր են (Տիգրանը, Արտաշէսը, Արտա-
ւազդը, Տիրանը, Արշակը, Մուշեղը Հին եւ
միջնադարեան Հայաստանի արքաներ եւ
իշխաններ են): Չնայած պատմականացմա-
նը, թշնամական կերպարները երբեմն
հանդէս են գալիս Հին դիցաբանական ա-
նուններով (Հայկի հակառակորդ Բէլը Բա-
բելոնի մեծ աստուած Բել-Մարդուկն է, Ա-
րամի հակառակորդ Բարշամը՝ սիրիական
Բաալշամին աստուածը, Տիգրանի հակա-
ռակորդ Աժդահակը՝ իրանական առասպե-
լական օձ-վիշապ Աժի Դահական):

européennes, Revue de l'histoire des religions CIC-3, p. 251-271; G. Dumézil, *Le roman des jumeaux*, Paris, 1994, p. 133-134; A. Petrosyan, *The Indo-European...*, passim; Idem: *The Indo-European *H₂ner(i)-s and the Danu Tribe*, Journal of Indo-European Studies, 35, (2007) p. 297-310; Idem: *Forefather Hayk in the Light of Comparative Mythology*, Journal of Indo-European Studies, 37 (2009), p. 155-163:

1 Հայ վիպական բանահիւսութեան համակարգ-
ման վերաբերեալ տե՛ս Մ. Արեղեան, *Երկեր*,
հտ. Ա., Երևան, 1966. A. Y. Petrosyan, *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, Journal of Indo-European Studies Monograph 42, Washington DC, 2002. К. Мелик-Оганджаниян, *Армянская народная эпическая поэзия*, Ереван, 2016. Ս. Յարութիւնեան, *Բանագիտական ակնարկներ*, Երևան, 2010, էջ 139-161. Ա. Եղիազարեան, «Սասնայ ծոեր» էպոսի պոէտիկան, Երևան, 2013. Ա. Պետրոսեան, *Հայոց պատմութիւնը եւ վիպական բանահիւսութիւնը*, «Բաներ Մատենադարանի», 21, Երևան, 2014, էջ 131-142:

2 Ա. Եղիազարեան, նշ. աշխ., էջ 31 հտն:
3 Կարծես հայոց ազգածագման աւանդութեան
համար է տրուած հերոսական էպոսի հետեւեալ
բնութագիրը. «Հերոսական էպոսը ձեւաւորում է
էթնիկական համայնքի գործընթացում,
զարգացում եւ տարածում էթնոգենեզի (ազգա-
ծագման – Ա. Պ.) եւ ցեղերի տեղաշարժման ըն-
թացքում, այդ պատճառով էլ այն աւելի քիչ է
թափանցիկ միջազգային ազդեցութեան համար»
(տե՛ս Ե. Մ. Мелетинский, *Введение в историческую поэтику эпоса и романа*, М., с. 62): Ազ-
գածին աւանդութեան հիմնարկական ակունք-
ների վերաբերեալ տե՛ս S. Aghyan, *Les débuts de l'histoire d'Arménie et les trois fonctions indo-*

4 Այդ մասին տե՛ս Մ. Արեղեան, նշ. աշխ., էջ 118. А. Е. Петросян, *Армянская Сатаник/Сатаник и кавказская Сатана/Сатаней*, «Вестник Владикавказского научного центра», 1, 2016, с. 10, 12-13:

Բոլոր հին վէպերը ներկայացնում են մի քանի սերնդի հերոսների պատմություն, ինչը հայկական էպոսի բնորոշ առանձնա-
 յատկությունն է: Վէպերի սիւժէները քիչ ընդհանրություններ ունեն (դրանք յաճախ արտացոլում են տարբեր դարաշրջանների պատմական իրողություններ): Սակայն, համեմատությունը բացայայտում է նրանց բո-
 լորին բնորոշ մի հիմնականաբար, որի շուրջ ձևաւորւում է էպոսը: Այն կարող է պարզեցուել որպէս մի ծննդաբանական սխեմա՝ որոշակի կերպարների յաջորդականութիւն.
 1) աստուածութիւն կամ նրա սիմուլում, 2) նրա որդիները՝ երկուորեակներ, որոնցից առաջինը ներկայացնում է ամպրոպի աստ-
 ծու էպիկական տարբերակը, 3) «զոհուող» (եւ յարութիւն առնող) կերպար:

Հնդեւրոպական համատեքստում այդ սխեման կարելի է դիտարկել որպէս երկու առասպելների համադրություն՝ 1) աստուածային երկուորեակների՝ երկնային աստծու որդիների առասպելովը եւ 2) ամպրոպի աստծու եւ նրա «պատժուող/զոհուող» որդու առասպելովը⁵: Ակնյայտ է, որ այս վիպական սխեման ծագում է աստուածային պարագիծից՝ դիցաձևութիւնից (թէոգոնիա): Դիցաբանական վերակազմութեան մէջ նախնական սխեման պատկերանում է որպէս պարզ ծննդաբանական շարք՝ 1) երկնային աստուած, 2) նրա որդիները, երկուորեակներ, որոնցից մէկն ամպրոպի աստուածն է, վիշապամարտիկ, 3) ամպրոպի աստծու որդին, «զոհուող» աստուածութիւն:

5 Հնդեւրոպական երկուորեակային առասպելների վերաբերեալ տե՛ս, օրինակ, D. Ward, *The Divine Twins: An Indo-European Myth in Germanic Tradition*, Berkeley/Los Angeles, 1968; J. P. Mallory, D. Q. Adams, *Encyclopedia of Indo-European Culture*, London/Chicago, p. 161 ff.; M. L. West, *Indo-European Poetry and Myth*, New York, 2007, p. 186 ff., հնդեւրոպական ամպրոպի աստծու վերաբերեալ՝ B. B. Иванов, В. Н. Топоров, *Исследования в области славянских древностей*, М., 1974:

Տոհմի հիմնադիրը՝ երկուորեակների հայրը, որը հնդեւրոպական վերակազմութեան մէջ հանդէս է գալիս որպէս երկնքի (արեւի) աստուած՝ *dyēus ph₂ter-, շարքում կարող է փոխարինուել այլ աստուածութեամբ կամ նրա սիմուլումով (Հայկ, Ծովինար, «Վիպասանքում» երկուորեակային հերոսների հայրը ցուլն է, իսկ «Սասնայ ծռերի» մի տարբերակում ըստ երեւոյթին՝ ձին⁶): Նա, ի դէպ, երբեմն ոչ մի դեր չի խաղում, եւ տոհմը, ըստ էության, սկսում է երկուորեակներից:

Երկուորեակային կերպարները բնորոշում են նման անուններով (Արամանեակ եւ Արամայիս, Երուանդ եւ Երվազ, Սանասար եւ Բաղդասար)⁷. նրանք (կամ նրանցից մէկը) հիմնում են նոր աւանդու-
 թը սկզբնաւորող քաղաքը (Արմաւիր, Երուանդաշատ, Սասուն): Ամպրոպի աստծու՝ երկուորեակային կերպարի վառ օրինակն է Սանասարը, Սասունի հերոսների հիմնական զէնքի՝ Թուր կէծակի առաջին տէրը⁸: էպիկական տոհմաբանութիւններում այդ սխեման յաճախ բարդանում է.

- 6 Ս. Յարութիւնեան, *Հայ առասպելաբանութիւն*, Բէյրութ 2000, էջ 349-350:
- 7 Արամանեակի եւ Արամայիսի երկուորեակային բնոյթի վերաբերեալ տե՛ս Ա. Պետրոսեան, Ն. Տիրացեան, *Հայոց առաջին մայրաքաղաք Արմաւիրը պաշտամունքային կենտրոն*, «Պատմաբանասիրական հանդէս», 2012, թիւ 1, էջ 169-184. Երուանդի եւ Երվազի մասին՝ Ս. Յարութիւնեան, *Հայ առասպելաբանութիւն*, էջ 341-345:
- 8 Սանասարի՝ որպէս ամպրոպի աստծու վիպականացած կերպարի վերաբերեալ տե՛ս Մ. Աբեղեան, *Երկեր*, հտ. Ա, էջ 414 հտն., Երուանդի վերաբերեալ՝ Ս. Յարութիւնեան, *Հայ առասպելաբանութիւն*, էջ 103 հտն.: Ի դէպ, ամպրոպի աստուածը հանդէս է գալիս որպէս երկուորեակային կերպար նաեւ որոշ այլ աւանդութիւններում (նին հնդկական Ինդրան, խոնդիական Թեշտըրը եւ շումերական Իշկուրը). տե՛ս A. Y. Petrosyan, *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, p. 14 f., 20 ff.; A. E. Петросян, *Армянско-индийские эпические параллели*, - Армянский эпос и мировое эпическое наследие, Ереван, 2007, с. 38-46.

հանդիպում են տոհմագծեր երկու սերունդների երկուորեակներով, եւ ամպրոպի աստծու կերպարը կրկնում է որպէս շարքի հիմնական հերոս՝ տոհմի նախավերջին անդամ (ազգածին աւանդութեան մէջ՝ Արամ, «Վիպասանքում»՝ Արտաշէս, «Սասնայ ծռերում»՝ Դաւիթ):

Շարքն աւարտում է վերջին հերոսի (Արա, Արտաւազդ, Փոքր Մհեր) վերջով/մահով, յարութեան ակնկալիքով, որից յետոյ դարաշրջանն աւարտում է (տեղի են ունենում աղէտներ, փոխում կամ վերջանում է արքայատոհմը, Հայաստանը կորցնում է անկախութիւնը եւ այլն):

Վիպական շարք	Երկուորեակային տիպի հերոսներ	Մեծ հերոս	Վերջին՝ զոհուող եւ վերածնուող կամ փակուած հերոս
Ազգածին աւանդութիւն	Արամանեակ եւ Արամայիս	Արամ	Արա Գեղեցիկ
«Վիպասանք»	Երուանդ եւ Երվազ	Արտաշէս	Արտաւազդ
«Սասնայ ծռեր»	Սանասար եւ Բաղդասար	Դաւիթ	Մհեր

«Քեօօղլի»: Քեօօղլին («Կոյրի որդի») ԺՁ.-ԺԷ. դարերի սահմանի պատմական անձ է, ջալալիների ապստամբութեան առաջնորդներից: Այս էպոսում չկայ տարբեր սերունդների հերոսների հերթագայութիւն: Սա թիւրքական էպոս է, բայց դրա յատկապէս արեւմտեան տարբերակների գործողութիւնները տեղի են ունենում Հայկական լեռնաշխարհում, ուստի այն ներառել է հայկական մոտիւներ: Հետաքրքիր է, որ Քեօօղլու անունն առաջին անգամ յիշատակել է Առաքել Դաւրիթեցին (1662 թ.), իսկ էպոսն առաջին անգամ գրառուել է Հայի կողմից Հայաստան թուրքերէնով (1721 թ.)⁹: «Քեօօղլու» հայոց

մէջ ամենալայն տարածութեան մասին է խօսում այն, որ ոչ մի այլ դիցաբանական կամ վիպական հերոսի անունով չկան այդքան տեղանուններ (մեծ մասամբ՝ աւերակ ամրոցներ, բայց նաեւ՝ լեռներ, գիւղեր եւն. որը Հայկական լեռնաշխարհում)¹⁰:

Հայագիտութեան մէջ ցոյց է տրուել, որ «Կոյրի որդու» սիւժէն ծագում է «Պարսից պատերազմից», ըստ որի, Տիրան թագաւորին՝ Արշակ թագաւորի հօրը, կուրացնում է Վարագ-Շապուհը (Փաւստոս, III, 20-21): «Քեօօղլին» ներառում է Արշակի լեգենդի առանցքային տարրերը՝ հօրը կու-

րացնելը՝ պայմանաւորուած ձիու հետ կապուած մի թիւրքամացութեամբ, եւ հերոսի վրէժը¹¹: Կան բազմաթիւ համապատասխանութիւններ «Քեօօղլու» եւ «Սասնայ ծռերի», միջեւ. օրինակ՝ Քեօօղլու թուրը պատրաստում է կայծակից (Հմմտ. Սասունի հերոսների Թուր կէծակին), նրա կարողական ձին, ինչպէս եւ Սասունի հերոսների ձին, ծովային ծագում ունի, Քեօօղլու ընկերները կոչւում են դալի՝ «խենթ», ինչպէս «Սասնայ ծռերի» հերոսները եւ այլն: Որոշ տարբերակներում կեանքի աւարտին Քեօօղլին մտնում է

- 10 Թ. Յակոբեան, Ս. Մելիք-Բախշեան, Հ. Բարսեղեան, *Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան*, հտ. 5, Երեւան, 2001, էջ 404-405:
- 11 Հ. Պերպլերեան, *Արշակ Բ. եւ Քեօօղլու*, Փարիզ, 1938. Կ. Մելիք-Օհանջանեան, *Տիրան-Տրդատի վէպը ըստ Փաւստոս Բուզանդի*, «Տեղեկագիր», 1947, թիւ 7, էջ 59-77:

9 Տե՛ս յատկապէս Ա. Աբրահամեան, Գ. Գաբրիէլեան, *Քեօօղլու նորայայտ երգերը*, Հայկ. ՍՍՏԻ ԳԱ Տեղեկագիր հասարակական գիտութիւնների, 1954, 9, էջ 71-93; Բ. Ա. Каррыев, *Эпические сказания о Кёр-оглы у тюркоязычных народов*, М., 1968, 10 сл.:

քարանձաւ (Հմմտ. Փոքր Մհերի եւ Արտա-
 ւազդի վերջը. Արշակ թագաւորը եւս
 շղթայուեալ եւ նետուեալ է Անյուշ բերդը,
 որտեղ եւ աւարտուեալ է նրա կեանքը):
 Այսպիսով, Քեօնօղլին, կարելի է ասել, որ
 շարունակուեալ է Հայաստանի վիպական ա-
 ւանդոյթը¹²:

Հայոց մէջ հնից ի վեր Քեօնօղլու՝ ծա-
 գումով Հայ լինելու վերաբերեալ կայուն
 կարծիք է եղել: Այդ մասին գրել են Աբո-
 վեանը «Վէրք Հայաստանի» գրքի առաջա-
 բանում եւ Աղայեանը վիպերգութեան իր
 մշակման մէջ (ի դէպ, Հայ իրականութեան
 մէջ յայտնի են նաեւ Ջ. Անտոնովի եւ Ս.
 Աւչեանի «Քեօնօղլի» թատերգութիւննե-
 րը): Ք. Պատկանեանի անաւարտ «Քեօնօղ-
 լի» գործում եւս հերոսը պէտք է լինէր Հայ,
 ով իսլամ էր ընդունել գաղափարական
 պատճառներով¹³: Քեօնօղլին Հայ է նաեւ
 զարաբաղեան ժողովրդական պատումնե-
 րում (այդ մասին կան նաեւ թուրքերէն

տեքստեր): Արեւմտեան Հայաստանի Հա-
 րաւային շրջանների պատումներում եւս
 Քեօնօղլին Հայ է՝ Արշամ (եւ ոչ Ռովշան)
 անունով, Վանի շրջանի Անկղտան գիւղից
 (ինչպէս որ քրդերի մէջ՝ Քեօնօղլին քուրդ
 է, օսմանցիների մէջ՝ օսմանցի եւն): Այս
 տարբերակները յագեցած են Հայկական
 բանահիւսութեամբ եւ կենցաղով ու այն-
 քան են հեռացած թուրքականներից, որ
 կարելի է համարել «Սասնայ ծռերը» յիշեց-
 նող մի նոր Հայկական էպոս¹⁴:

«Հայդուկի երգեր»: Հայկական եթէ
 ոչ էպոսի, ապա «հերոսական պոէզիայի»
 ժանրից են օսմանեան լծի դէմ պայքարող
 Հայդուկների մասին երգերը: Սրանք ան-
 բաժանելի են բալկանեան ժողովուրդների
 համապատասխան կերպարների՝ Հայդուկ-
 ների, կլեֆտների, իւնակների, ինչպէս եւ
 ուկրաինական կողակների մասին ժողովր-
 դական երգերից, որոնք գիտութեան մէջ
 դիտուում են որպէս այդ ժողովուրդների
 վիպական աւանդոյթների կարեւոր մի
 մաս¹⁵: Հայդուկի երգերը ստեղծուել են
 ուշ՝ ԺԹ.-Ի. դդ.: Դրանք նուիրուած են
 հիմնականում տարբեր հերոսներին եւ
 զուրկ են ամբողջականութիւնից ու Հայ-
 կական էպոսի հիմնական վաղնջական
 տարրերից (օրինակ՝ չկայ հերոսների սե-
 րունդների յաջորդականութիւն): Չնայած
 դրան, նրանք եւս դրսեւորում են հին ա-
 ռասպելա-վիպական աւանդոյթի որոշ
 գծեր: Հայդուկները կոչուում էին մուսուլ-
 մանական-արաբական ֆիդայի տերմինով
 (նաեւ՝ ֆիդա, ֆեդա, ֆեդայի՛ն՝ «զոհ».
 նրանք երգուում էին զոհուել Հայրենիքի
 համար): Երգերում Հայդուկի մահուան օ-
 րը կոչուում է սօն, զատիկ՝ Քրիստոսի յա-
 րութեան սօնի անունով. նա պէտք է յա-

12 Քեօնօղլու հրատարակուած միակ հայկական
 տարբերակը տե՛ս Քեօնօղլի, ժողովրդական վի-
 պասանութիւն, Երեւան, 1941: Էպոսի հայկական
 տարբերակների եւ հայկական կապերի վերաբե-
 րեալ տե՛ս Հ. Պերպլեւեան, նշ. աշխ., Խ. Սամուէ-
 լեան, Նախաբան, Քեօնօղլի, ժողովրդական է-
 պոս, էջ 5-23, Ա. Աբրահամեան, Գ. Գաբրիէ-
 լեան, նշ. աշխ., Ս. Ռամսագեան, Քեօնօղլի, «Ի-
 րան-ճամէ», 1996, թիւ 4-5, 1997, թիւ 4-5-6, 1998,
 թիւ 1-2-3, A. Y. Petrosyan, The Indo-European and
 Ancient Near Eastern Sources of the Armenian Epic,
 p. 157-158, Ռ. Մելքոնեան, Քեօնօղլու էպոսի
 հայկական հիմքերի շուրջ, Արեւելագիտութեան
 հարցեր VII, Երեւան, 2014, էջ 170-175: Էպոսի ե-
 րաժշտական մասի վերաբերեալ տե՛ս Լ. Երնջա-
 կեան, Աշուղական սիրավէպը մերձատարբեւ-
 լեան երաժշտական փոխառնչութիւնների համա-
 տեքստում, Երեւան, 2009, 97-165:

13 «Իմ դիցազնը իր նուիրական իդէայի համար
 զոհում է մարդու ամենաթանգ սրբութիւնը –
 կրօնը. դրա մէջ եւ ուզում եմ երկու տարեք
 միատրել՝ աստուածատուր քանքար, վե՛ր հոգի,
 նուրբ հայրենասիրութիւն եւ սխալ սկզբունք բա-
 րոյականութեան. դրան (Քեօնօղլուն – Ա. Պ.)
 կանգնեմ եւ զոհ իր ազնի իդէային...» (տե՛ս Ռ.
 Պատկանեան, Երկերի ժողովածու, հտ. 2, Երե-
 ւան, 1964, էջ 309:

14 Խ. Սամուէլեան, նշ. աշխ., էջ 18-20. Ս. Ռամս-
 ագեան, Քեօնօղլի, «Իրան-ճամէ», 1996, թիւ 4-5
 էջ 32:
 15 Տե՛ս օրինակ C. M. Bowra, Heroic poetry, London
 1952, passim.

րութիւն առնի եւ հասնի անմահութեան՝
 «երկնային փառքի», «փառքի պսակի»: Գե-
 րեզմանից ելնելու, յարութիւն առնելու
 կոչը երգերի ամենայաճախ հանդիպող մո-
 տիւններից է: Հայդուկների մշտական կո-
 չումը՝ «առիւծ» եւ չամուսնանալու երգու-
 մը յիշեցնում են էպոսի Մհերներին (Հմմտ.
 Մեծ Մհերի «առիւծ» կոչումը եւ անգա-
 ւակ Փոքր Մհերի կերպարը): Արեւմտեան
 Հայաստանի ազատագրման ողբերգական
 պատերազմը ճակատագրական կերպով
 կենտրոնացուած էր Սասունում եւ յարա-
 կից շրջաններում, որտեղ մեծ Հայդուկ
 Անդրանիկի մասին պատմել են «Սասնայ
 ծռերի» դրուագները յիշեցնող պատմու-
 թիւններ (նա, իբր, մարմնի վրայ խաչ է
 ունեցել, ամէն կուռից յետոյ լողացել ու
 նոր ուժ է ստացել եւ այլն)¹⁶: Այսպիսով,
 Հայդուկի երգերը շարունակում են էպոսի
 վերջին հերոսի՝ մեռնող եւ յառնող կերպա-
 րի աւանդոյթը¹⁷:

«Խորհրդային էպոսը»: Խորհրդային
 պետութեան առաջին տասնամեակներին
 Լենինի, Ստալինի եւ պետութեան որոշ այլ
 առաջնորդների մասին մեծ քանակու-
 թեամբ բանահիւսական, մերձբանահիւսա-
 կան եւ կեղծ բանահիւսական ստեղծագոր-
 ծութիւններ են ստեղծուել: Դրանք նկատ-
 մամբ վերաբերմունքը ինչպէս ստեղծուե-
 լիս, այնպէս էլ յետագայում չափազանց
 քաղաքականացուած է եղել: Դրանք եր-
 բմն բնութագրուել են որպէս «կեղծ բա-
 նահիւսական» (անգլ.՝ fakelore, ռուս.՝
 фальшлор), ինչը պարզունակեցնում է
 խնդիրը: Մինչդեռ յայտնի է, որ դրանց
 մէջ կան ե՛ւ պատուէրով ստեղծուած կեղծ
 յօրինուածքներ, ե՛ւ իսկական բանահիւսա-

կան ստեղծագործութիւններ (թէեւ դրանք
 երբեք իսկական բանահիւսական կեանք
 չեն ունեցել): Այդ տեքստերը որոշ չափով
 աղաւաղում են նախորդ բանահիւսական
 աւանդոյթը, բայց գործառութեան իմաս-
 տով դրանք ենթադրում, իսկ յաճախ վեր-
 արտադրում են նոյն աւանդոյթի օրինա-
 չափութիւնները¹⁸: Եւ ներկայումս՝ ԽՍՀՄ-
 ի փլուզումից տասնամեակներ անց, անհ-
 րաժեշտ է երեւոյթի գիտական քննարկու-
 մը եւ լիարժէք իմաստաւորումը:

Այդ ստեղծագործութիւններն այն
 ժամանակուայ գիտութեան մէջ համար-
 ւում էին մեր էպոսի «հինգերորդ ճիւղը»,
 այսինքն՝ «Սասնայ ծռերի» շարունակու-
 թիւնը Փոքր Մհերի ճիւղից յետոյ («Լենին
 փաշայի» շատ դրուագներ ստեղծուած են
 այդ ոգով)¹⁹: Դրանցում Լենինն ու Ստա-

18 Ե՛ւ արեւմտեան, ե՛ւ ռուսական գիտութեան մէջ
 վաղուց ի վեր կան մեծաքանակ աշխատութիւն-
 քեր, որտեղ ուսումնասիրում են «խորհրդային է-
 պոսը», նրա ստեղծման առանձնայատկութիւն-
 քերը, կեղծիքի եւ իրականի համամասնութիւնը
 նրանում եւն (տե՛ս, օրինակ, F. Miller, Folklore
 for Stalin: Russian Folklore and Pseudofolklore of
 the Stalin Era, New York, 1991; A. Մ. Топорков и
 др., Рукописи, которых не было: подделку в
 области славянского фольклора, М., 2002 (յատ-
 կապէս՝ Т. Г. Иванова, О фольклорной и псевдо-
 фольклорной природе советского эпоса, с. 403-
 431); К. А., Богданов, Vox populi: фольклорные
 жанры советской культуры, М., 2009 եւն: Իմի-
 ջիալուց, խորհրդային դարաշրջանի այդ ստեղ-
 ծագործութիւնները ներկայացուել եւ քննարկուել
 են էպոսագիտական հիմնարար աշխատութիւն-
 քերում (տե՛ս, օրինակ, С. М. Bowra, Op. cit.,
 passim):

19 Խորհրդային առաջին առաջնորդների մասին
 հայկական էպիկական ստեղծագործութիւնների
 վերաբերեալ տե՛ս Լենինը հայ ֆոլկլորի մէջ,
 խմբ.՝ Կ. Մելիք-Օհանջանեան, Երեւան, 1936. Հ.
 Մելիքեան, Լենինը եւ Ստալինը հայկական
 ֆոլկլորում, Երեւան, 1941. Մ. Մուրադեան, Լե-
 նինի եւ Ստալինի կերպարները սովետական
 հայկական երաժշտական ստեղծագործութիւն-
 քերում, «Տեղեկագիր», 1949, թիւ 10, էջ 111-128.
 Ա. Նազիգեան, Սովետահայ գրականութիւնը եւ
 բանահիւսութիւնը, Երեւան, 1954. Ա. Պետրո-
 սեան, Առասպելաբանական մի սխեմայի ար-

16 Այդ մասին մանրամասն տե՛ս Ա. Ղազիշեան,
 Անդրանիկ. բանահիւսական կերպարը (պատ-
 րաստում է տպագրութեան):
 17 Ա. Պետրոսեան, Ֆիդայու կերպարը հայ բանա-
 հիւսութեան մէջ, Աւանդական եւ արդիական
 հայ մշակույթում. Հայ ժողովրդական մշակույթ
 XV, Երեւան, 2010, էջ 447-453:

լինը յաճախ են հանդէս գալիս որպէս առասպելական հիմնադիր-երկուորեակներ յիշեցնող կերպարներ: Սակայն հետաքրքիր է, որ խորհրդային հերալդիկ շարքի յաջորդական պրոֆիլները՝ Մարքս-Էնգելս-Լենին-Ստալին, համադրելի են նշուած ծննդաբանական սխեմայի հետ: Առաջնորդների յուղարկաւորութիւնները դամբարանում եւս կարող էին ամրապնդել հին վիպական առնչութիւնները (օրինակ, դամբարանում «քնած» առաջնորդը դիտուել է որպէս Փոքր Մհերի տիպի՝ քրանձաւում «քնած հերոս»)՝²⁰: Հասկանալի է, որ այս համընկնումները պատահական բնոյթ են կրում, բայց եւ այնպէս, դրանք կարող էին ռեզոնանսի մէջ մտնել հին, արքետիպային մոդելների հետ²¹:

Ինչեւէ, Ստալինի «անձի պաշտամունքի» դատապարտումը (1956 թ.) եւ խորհրդային իրականութեան յետագայ զարգացումները կանգնեցրին այդ վերջին «էպո-

սի» երթը: Խրուչչովի դարաշրջանը դարձաւ խորհրդային հերոսական էպիկայի աւարտը. կարեւորուեց բանահիւստութեան մէկ այլ ժանրը՝ անեկդոտը: Հիմնական թիրախը ԽՍՀՄ ընթացիկ ղեկավարներն էին (Խրուչչովը, Բրեժնեւը եւ միւսները), բայց Լենինը եւ Ստալինը շարունակում էին մնալ կարեւոր կերպարներ (օրինակ՝ Լենինի մասին ուշ հայկական անեկդոտների շարք կայ): Հազուադէպ հանդէս էին գալիս նաեւ Մարքսը եւ Էնգելսը:

Էպոսների պատմականութիւնը եւ հերոսների ժառանգորդութիւնը: Հայ ժողովրդական վիպական միտքը յոյժ պատմական է, ինչը մեր վիպական աւանդոյթի բնորոշ առանձնայատկութիւնն է (որով եւ այն նմանում է, ասենք, իրանականին եւ տարբերում հարեւան կովկասեաններից): Դա կարող է բացատրուել հնում երկարատեւ եւ հզօր պետականութիւն ունենալու հանգամանքով: Հայ ժողովուրդը էպոսներով կողաւորել է իր պատմութեան դարաշրջանները սկսած ժողովրդի ծագումից մինչեւ Ի. դարի կէսը («Առաջին Հայկեանները»՝ մինչուրարտական, «Վիպասանքը»՝ յետուրարտական՝ Երուանդունիների եւ Արտաշիսեանների, «Պարսից պատերազմը»՝ Արշակունեաց, «Տարօնի պատմութիւնը»՝ յետարշակունեաց, «Սասնայ ծռերը»՝ արարական եւ սելջուկեան, «Քեօտողլին»՝ ուշմիջնադարեան եւ «ԽՍՀՄ առաջնորդները»՝ խորհրդային շրջաններ):

Առաջին վէպի Հայկը, Արամը եւ Արան ծագումով հին, բնիկ աստուածների կերպարներ են, որոնք հաւանաբար ժողովրդի կրօնական համակարգը փոխուելուց՝ իրանական դիցարանի ներդրումից յետոյ, անցել են աւելի ցածր, էպիկական հերոսների մակարդակ (նրանց անունները եւս հին աստուածների անուններ կամ մականուններ են): Նոյն երեւոյթը նկատուում է եւ յաջորդ նոր կրօնի՝ քրիստոնէութեան ընդունումից յետոյ. Վահագն աստուածը

տացուումը հասարակական գիտակցութեան մէջ,- Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, Հանրապետական գիտական նստաշրջան, 1984-1985 թթ. ազգաբանական եւ բանագիտական դաշտային հետազօտութիւնների արդիւնքները, Չեկուցումների հիմնադրոյթներ, Երեւան 1990, էջ 47-50:

20 Փոքր Մհերի եւ երոպական «քնած հերոսների» կապի մասին տե՛ս Ա. Ե. Петросян, *Влияние армянского Мэра на европейских героев*, «Вестник Матенадарана», т. 20 (2014), с. 169-174. Լենինի վերաբերեալ՝ Ա. Յ. Топорков и др., *Ազ. աշխ.*, էջ 405-406:

21 Խորհրդային պաշտօնական գաղափարախօսութիւնն ունէր վերին աստիճանի արխայիկ յատկանիշներ՝ համադրելի հնագոյն առասպելների հետ: Այսպէս, Ստալինի սովորական մակդիրները՝ «արեւ» եւ «հայր», յիշեցնում են հնդեւրոպական արեւային երկնքի աստծուն (*dyēus ph₂ter- «լուսատու երկինք-հայր»), իսկ միւս մշտական մակդիրը՝ «ընկեր», համընկնում է Միտրա աստծու անունին հնդկական իմաստաւորման հետ: Այդ նոյն աստուածն Իրանում դարձել էր Միթրա եւ Միհր, արեւի աստուած (տե՛ս Ա. Պետրոսեան, *Առասպելաբանական մի սխեմայի արտացոլումը հասարակական գիտակցութեան մէջ*):

Խորենացու մօտ (Ա.լա) հանդէս է գալիս որպէս Տիգրանի որդի, իսկ Միհրը՝ որպէս «Սասնայ ծռերի» Մեծ եւ Փոքր Մհերներ²²: Լենինը եւ Ստալինը, որոնք ԽՍՀՄ-ում, կարելի է ասել, աստուածացուել էին, «ձնհալից» յետոյ իջնում են անեկդոտի հերոսի մակարդակի²³: Այսպիսով, պատմութեան ընթացքում նախորդ դարաշրջանի դիցարանական կերպարներն իջնում են աւելի ցածր մակարդակ:

«Սասնայ ծռերից» յետոյ ողջ ծննդաբանական շարքը պարունակող նոր լիարժէք էպոսներ, կարելի է ասել, չեն ստեղծուել. ե՛ւ դարաշրջաններն էին ուրիշ, ե՛ւ պատմական հանգամանքները թոյլ չեն տուել: Բայց եղած նիւթի հիման վրայ կարելի է ասել, որ մեր էպոսները ստեղծուել են առասպելական եւ էպիկական արքետի-

պային կերպարների միջոցով Հայաստանի պատմական դարաշրջանները որպէս անգիր պատմութիւն կողաւորման եղանակով:

Ուշ հերոսական գրոյցներից կարծես միայն մէկը՝ «Կաշտի քաջերն» է հեղինակային մշակմամբ ամբողջացուել որպէս լիարժէք գրական էպոս²⁴: Բազմաթիւ ժողովուրդներ որպէս իրենց ազգային էպոս են ընկալում նմանատիպ ստեղծագործութիւններ (համտ. Ռուսթաւելու «Ընձենաւորը», Հ. Լոնգֆելլոյի «Հայաւաթան», Է. Լենրոտի «Կալեւալան», Ա. Պոլմպուրի «Լաչալեսիսը» եւն), եւ «Պարսից պատերազմի» ու «Տարօնի պատերազմի» կողքին «Կաշտի քաջերն» էլ կարող է դիտուել որպէս այդպիսին: Այն եւս, ի դէպ, գուրկ է ծննդաբանական սխեմայից:

22 Ընդ որում, Միհր-Մհերի կերպարն էլ իր հերթին ծագում է ուրարտական Խալդիից: Այդ կերպարն է Հայաստանից անցել արեւմուտք եւ հիմք դրել արեւմտեան միթրաիզմի աստծուն: Իսկ Փոքր Մհերը յետագայում իր ազդեցութիւնն է ունեցել հարաւային պալեոստեղծութիւնի էպիկական մի հերոսի՝ Մարկո Կրալեիչի, ապա եւ «քնած հերոսների» կերպարների ձեւաւորման վրայ (տե՛ս Ա. Petrosyan, *Haldi and Mithra/Mher, Aramazd*, Armenian Journal of Near Eastern Studies, 2006, 1, p. 222-238; Ա. Петросян, *Влияние армянского Мэра на европейских героев*, «Բանբեր Մատենադարանի», հտ. 20, 2014, էջ 169-174:

23 Որպէս անանորիցայ երեւոյթ կարող են դիտուել, օրինակ, հեթանոսութեան անկման դարաշրջանի հեղինակ Լուկիանոսի ստեղծագործութիւնները (Ք. յ. Բ. դ.), որտեղ Չեւսը եւ միւս աստուածները հանդէս են գալիս որպէս անեկդոտային տիպի հերոսներ:

24 Տե՛ս Կ. Սիտալ, *Կաշտի քաջեր*, Ամերիկահայ առաջադիմական միութիւն, 1942. J. Russell, *The Heroes of Kasht (Kašti k'ajer): An Armenian Epic*, Ann Arbor, 2000: